ուր պէտք է. նա դիմում է խիստ սակաւաթիւ կրօնական գրքերին, մինչդեռ շինտօն ուժեղ է հէնց նրանով, որ գրքի հետ գործ չունի, այլ ապրում է բուն իսկ ժողովրդի սրտում:



ՕՍՈՎԱՅԻ ՏԱՃԱՐԸ

«Շինտօ – դա նշանակում է հաստատուն կամք, արիութիւն, պատիւ, սիրալիր վարք եւ մանաւանդ ազնուութիւն: Այդ կրօնի ոգին է կազմում որդիական սէրը եւ սկզբունքի համար իր անձը զոհելու պատրաստականութիւնը: Նրա ստեղծագործութիւնն է ճապոն կնոջ քնքոյշ սիրտը: Դա մի տեսակ պահպանողական ոյժ է, որ ամեն կերպ արգելում է ժողովրդին իր անցեալի լաւ կողմերը բաց թողնել՝ օտար